ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

..11.. **մայիսի 2026թ.** N ..29..... -Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի ապրիլի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 439-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի ապրիլի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1667-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 443-Ն որոշումների 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել համայնքային գույքի օտարման (բացառությամբ հարկադիր կատարողի որոշմամբ հարկադիր աճուրդով իրացման ենթակա արգելանքի տակ դրված գույքի օտարման) նպատակով էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի անցկացման և կազմակերպման գործընթացի մեթոդական ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5/11/2026

X

ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Signed by: SIMONYAN ARMEN 4003890647

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ

Նախարարին փոխարինող

ք.Երևան

Հավելված
Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
2026թ. «11» N23- Լ հրամանի

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդական ուղեցույցը սահմանում է համայնքային սեփականություն հանդիսացող գույքի (բացառությամբ հարկադիր կատարողի որոշմամբ հարկադիր աճուրդով իրացման ենթակա՝ արգելանքի տակ դրված գույքի) օտարման գործընթացի հստակ ընթացակարգն ու քայլերի հաջորդականությունը՝ պետական գույքի օտարման դեպքում կիրառվող էլեկտրոնային աճուրդի միասնական համակարգի միջոցով:

2. Էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը կազմվում է՝ համաձայն օրինակելի Ձև 1-ի:

3. Համայնքային գույքի օտարման նպատակով անշարժ գույքի էլեկտրոնային աճուրդի հրապարակային ծանուցումը կատարվում է՝ համաձայն օրինակելի Ձև 2-ի:

4. Համայնքային գույքի օտարման նպատակով շարժական գույքի էլեկտրոնային աճուրդի հրապարակային ծանուցումը կատարվում է՝ համաձայն օրինակելի Ձև 3-ի:

II. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Համայնքային գույքի էլեկտրոնային աճուրդը կազմակերպում և անցկացնում է էլեկտրոնային աճուրդի կազմակերպիչը՝ համապատասխան համայնքի ղեկավարը: Համապատասխան համայնքի ղեկավարն սույն մեթոդական ուղեցույցն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից տրված որոշման համաձայն սահմանում է համակարգը սպասարկողներին, օգտվողներին, պատասխատուներին և նրանց գործառույթները:

2. Աճուրդի կազմակերպիչն իր էլեկտրոնային կայքում (այսուհետ՝ կայք) հրապարակում է համապատասխանաբար համայնքային գույքի էլեկտրոնային աճուրդի կազմակերպման ժամկետի մասին սույն հրամանի Ձև 2-ով կամ Ձև 3-ով հաստատված հրապարակային ծանուցմանը համապատասխան ծանուցումը՝ աճուրդը կայացնելու վերաբերյալ որոշում ընդունելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ աշխատանքային ժամերին: Էլեկտրոնային աճուրդն անցկացվում է համայնքային շարժական գույքի օտարման մասին հրապարակային ծանուցմանը հաջորդող 15-րդ օրվանից, իսկ համայնքային անշարժ գույքի դեպքում՝ օտարման մասին հրապարակային ծանուցմանը հաջորդող 45-րդ օրվանից ոչ շուտ:

3. Էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցումը նաև հրապարակվում է նաև զանգվածային լրատվության միջոցով, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում:

4. Էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի աճուրդի մասին հետևյալ տեղեկությունները՝

1) աճուրդի կայացման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և ժամը, ընդ որում, էլեկտրոնային աճուրդի սկիզբ չի կարող սահմանվել ժամը 12:00-ից հետո և ոչ աշխատանքային օրերին.

2) աճուրդի կազմակերպչի անվանումը.

3) աճուրդի ձևը և անցկացման կարգը.

4) աճուրդի պայմանները, այդ թվում՝ լոտի (լոտերի) անվանումը, լոտի նկատմամբ սահմանափակումները, եթե լոտն առարկա է, ապա նրա ֆիզիկական վիճակը (մաշվածությունը) և (կամ) արտադրման տարեթիվը, լոտի մեկնարկային գինը, լոտը երրորդ անձի իրավունքով ծանրաբեռնված լինելու դեպքում՝ այդ իրավունքի գործողության ժամկետը, ինչպես նաև էական այլ պայմաններ.

5) լոտն ուսումնասիրելու վայրը, ամսաթիվը և ժամանակը.

6) աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.

7) աճուրդում հաղթողին որոշելու կարգը.

8) կազմակերպչի կողմից սահմանված նախավճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը, ժամկետները և հաշվեհամարը.

9) անշարժ գույքի օտարման դեպքում գնահատված շուկայական արժեքը, վճարման կարգը և ժամկետները, հողամասի և շինության նպատակային և գործառնական

նշանակությունները, մակերեսները, Քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված՝ գույքի քաղաքաշինական սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ տարածական պլանավորման փաստաթղթերի անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի համարը.

10) մեկից ավելի լոտերի աճուրդի դեպքում՝ լոտերի վաճառքի հերթականությունը.

11) յուրաքանչյուր լոտի համար՝ նվազագույն գնային հավելումի չափը.

12) գնման գնի վճարման կարգը, ժամկետները և հաշվեհամարը.

13) ինչպես նաև այլ տեղեկություններ գույքի մասին (պարտադիր ներառելով լուսանկարներ (առկայության դեպքում՝ տեսաձայնագրություններ), տրանսպորտային միջոցների աճուրդի դեպքում՝ պարտադիր կցելով նաև տեսաձայնագրությունն ու շարժիչի լուսանկարը):

5. Էլեկտրոնային աճուրդով օտարման ենթակա գույքի վաճառքի մեկնարկային գինը, որից սկսվում է յուրաքանչյուր լոտի էլեկտրոնային աճուրդը, սահմանվում է համայնքային գույքի օտարման վերաբերյալ համապատասխան իրավական ակտերով՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության գնահատման օրենսդրության համաձայն տվյալ գույքի գնահատված արժեքի մեծությունը:

6. Համայնքային գույքի օտարման դեպքում էլեկտրոնային աճուրդի մասնակիցների համար, ելնելով լոտի մեկնարկային գնից, սահմանվում են մեկնարկային գնի նվազագույն հավելման հետևյալ չափերը՝

1) լոտի մեկնարկային գնի մինչև 100.000 դրամի դեպքում նվազագույն հավելման չափը սահմանվում է 500 դրամ.

2) լոտի մեկնարկային գնի 100.001-500.000 դրամի դեպքում՝ 1.000 դրամ.

3) լոտի մեկնարկային գնի 500.001-1.000.000 դրամի դեպքում՝ 10.000 դրամ.

4) լոտի մեկնարկային գնի 1.000.001-10.000.000 դրամի դեպքում՝ 50.000 դրամ.

5) լոտի մեկնարկային գնի 10.000.000-ից ավելիի դեպքում՝ մեկնարկային գնի 1 %-ի չափով:

7. Էլեկտրոնային համակարգում մասնակիցների գրանցումն իրականացվում է առցանց եղանակով՝ նշելով՝

1) ֆիզիկական անձանց դեպքում՝ գրանցվողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, ծննդյան ամսաթիվը, հեռախոսահամարը, հասցեն, քաղաքացիությունը, հանրային ծառայությունների համարանիշը, էլ-փոստի հասցեն.

2) իրավաբանական անձանց դեպքում՝ կազմակերպության անվանումը, հասցեն ու հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև տնօրենի (եթե գրանցվողն այլ անձ է) անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, ծննդյան ամսաթիվը, հեռախոսահամարը, հասցեն, քաղաքացիությունը, հանրային ծառայությունների համարանիշը, էլ-փոստի հասցեն:

8. Մինչև էլեկտրոնային աճուրդի սկսելը մասնակիցը կամ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի համապատասխան աշխատակիցը կարող է ուղղել սույն ուղեցույցի 7-րդ կետում նշված տվյալներում առկա տեխնիկական վրիպակները, եթե դրանք չեն կարող ազդել աճուրդի ելքի և հաղթող մասնակցի ընտրության վրա, ընդ որում, յուրաքանչյուր լրացված դաշտում երկու նիշի փոփոխությունից ավելի չի թույլատրվում կատարել:

9. Համակարգում գրանցված անձը կարող է մասնակցել համայնքային գույքի օտարման նպատակով կազմակերպվող էլեկտրոնային աճուրդին սույն ուղեցույցի 11-րդ կետով սահմանված ժամկետի մեկնարկից սկսած մինչև ավարտից առնվազն 5 րոպե առաջ՝ նախավճար վճարելու դեպքում: Էլեկտրոնային աճուրդի նախավճարի չափը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

1) պետական և համայնքային գույքի օտարման դեպքում՝

ա. լոտի մեկնարկային գնի մինչև 100 000 դրամի (ներառյալ) դեպքում նախավճարի չափը սահմանվում է մեկնարկային գնի 50 տոկոսի չափով,

բ. լոտի մեկնարկային գնի 100 001-1 000 000 դրամի դեպքում՝ 40 տոկոսի չափով,

գ. լոտի մեկնարկային գնի 1 000 001- 10 000 000 դրամի դեպքում՝ 30 տոկոսի չափով,

դ. լոտի մեկնարկային գնի 10 000 001- 100 000 000 դրամի դեպքում՝ 20 տոկոսի չափով,

ե. լոտի մեկնարկային գնի 100 000 001- 500 000 000 դրամի դեպքում՝ 10 տոկոսի չափով,

զ. լոտի մեկնարկային գնի 500 000 001 դրամից ավելիի դեպքում՝ 5 տոկոսի չափով.

10. Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու համար մասնակիցը լոտի մեկնարկային գնի՝ սույն ուղեցույցի 9-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված չափով նախավճար է սառեցնում առցանց վճարման համակարգի միջոցով:

11. Յուրաքանչյուր լոտի էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի աճուրդի նվազագույնն սկսման պահին հաջորդող երրորդ աշխատանքային օրվա համապատասխան ժամը:

12. Էլեկտրոնային աճուրդի ավարտին նախորդող վերջին րոպեի ընթացքում յուրաքանչյուր նոր գնային առաջարկի դեպքում աճուրդը շարունակվում է ևս 1 րոպե՝ հաշված առաջարկի ստացման պահից: Աճուրդի ընթացքում յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնելու նոր գնային առաջարկ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային առաջարկը՝ առնվազն նվազագույն հավելման չափով: Ընդ որում, մեկից ավելի լոտերը կարող են սկսվել միաժամանակ, սակայն յուրաքանչյուր հաջորդ լոտ կարող է ավարտվել նախորդ լոտի ավարտից առնվազն 1 րոպե հետո:

13. Էլեկտրոնային աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը: Հաղթողը որոշվում է համակարգի միջոցով: Հաղթող մասնակիցը համակարգի միջոցով գեներացված էլեկտրոնային աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը (այսուհետ՝ արձանագրություն) և հետևյալ փաստաթղթերը ներկայացնում է համապատասխան կազմակերպչին.

1) ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացին՝ անձը հաստատող փաստաթղթի, փախստական անձի դեպքում՝ նույնականացման քարտի կամ ճամփորդական փաստաթղթի, իսկ օտարերկրյա քաղաքացին՝ անձնագրի պատճենները և թարգմանությունը.

2) իրավաբանական անձանց համար՝ գրանցման և հիմնադիր փաստաթղթերի պատճենները, իսկ քաղաքացիների, իրավաբանական անձանց գործադիր մարմնի ղեկավարի և լիազորված անձանց համար՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

3) իրավաբանական անձանց համար նաև գրավոր հավաստում այն մասին, որ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ դիմողի (հայտատուի) կանոնադրությամբ տվյալ գույքը տվյալ ձևով գնելու համար պետական համապատասխան մարմինների համաձայնություն չի պահանջվում կամ, որ պահանջվող համաձայնություններն ստացված են (կցելով այդ համաձայնագրերը).

4) հաղթողի կողմից տրված լիազորագիրը (եթե արձանագրությունն ստորագրում է լիազորված անձը):

14. Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցը ստորագրված արձանագրությունն ու սույն ուղեցույցի 13-րդ կետում նշված փաստաթղթերը, աճուրդի կայացման օրվանից մինչև

հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, առցանց եղանակով (պաշտոնական էլեկտրոնային հասցեին) փոխանցում է համապատասխան կազմակերպչին:

15. Կազմակերպչի համապատասխան աշխատակիցը, մինչև արձանագրությունը ղեկավարի ստորագրմանը ներկայացնելը, ստուգում է սույն ուղեցույցի 14-րդ կետում ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը ուղեցույցի 13-րդ կետի պահանջներին: Եթե փաստաթղթերը չեն համապատասխանում ուղեցույցի 13-րդ կետի պահանջներին, կամ առկա են թերություններ, դրանք վերադարձվում են հաղթող մասնակցին շտկելու և մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը կազմակերպչին վերադարձնելու համար: Փաստաթղթերի համապատասխանության դեպքում արձանագրությունը ներկայացվում է կազմակերպչի ստորագրմանը:

16. Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցը պարտավոր է արձանագրությունն ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել լոտի գինն ամբողջությամբ՝ հաշվանցելով նախավճարը:

17. Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցը սույն ուղեցույցի 16-րդ կետով նախատեսված վճարումներն իրականացնում է առցանց բանկային հաշվեհամարով կամ փոխանցում կատարելով:

18. Սույն ուղեցույցի 17-րդ կետով նախատեսված վճարումները կատարելուց հետո (բացառությամբ տրանսպորտային միջոցների օտարման դեպքերի), Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակցի հետ կնքվում է առուվաճառքի պայմանագիր և իրականացվում են գույքի հանձնման-ընդունման աշխատանքներ:

19. Էլեկտրոնային աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած, ինչպես նաև տեխնիկական անսարքության (ձախողման) պատճառով հաղթող ճանաչված մասնակցի նախավճարը երեք աշխատանքային օրվա ընթացքում ապասառեցվում է, իսկ համապատասխան հաշվին փոխանցվածը վերադարձվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում:

20. Էլեկտրոնային աճուրդը չկայացած և անվավեր է ճանաչվում, եթե՝

1) աճուրդին չի մասնակցել ոչ մի գնորդ.

2) 7-րդ կետով սահմանված տվյալները սխալ են՝ բացառությամբ սույն կարգի 8-րդ կետում նշված դեպքի.

3) աճուրդում հաղթած մասնակիցը չի ստորագրել արձանագրությունը կամ հրաժարվել է կատարել հետագա վճարումները.

4) հաղթողի կողմից սույն ուղեցույցի 15-րդ կետով սահմանված ժամկետում շտկված փաստաթղթերը չեն ներկայացվել.

5) աճուրդը չկայացած է հայտարարվում նշված հանգամանքների ի հայտ գալու հաջորդ օրվանից ոչ ուշ.

6) աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն շահագրգիռ անձի հայցով՝ դատական կարգով.

7) աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքում կազմակերպվում է նոր աճուրդ, իսկ դրա անհնարինության դեպքում կիրառվում են անվավերության հետևանքներ՝ օրենքով սահմանված կարգով:

21. Էլեկտրոնային աճուրդը սույն ուղեցույցի 20-րդ կետի 2-4-րդ ենթակետերում նշված դեպքերում չկայանալու ժամանակ նախավճարը չի վերադարձվում և փոխանցվում է Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջե:

22. Էլեկտրոնային աճուրդը չկայացած հայտարարվելու դեպքում կազմակերպչի կողմից արձանագրությունը կազմվելուց հետո դրա մասին տեղեկատվությունը 2 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է կազմակերպչի էլեկտրոնային կայքում:

23. Համակարգի տեխնիկական անսարքության (ձախողման) դեպքում էլեկտրոնային աճուրդների անցկացումը կարող է կասեցվել մինչև տեխնիկական անսարքությունների վերացումը, որոնց մասին աճուրդի կազմակերպիչը տեղեկացնում է տվյալ լոտի աճուրդի մասնակիցներին՝ էլեկտրոնային փոստի կամ հեռախոսային հաղորդագրության միջոցով:

24. Համայնքային կազմակերպչի կողմից թույլ տրված հրապարակային ծանուցման և կից ներկայացված տեղեկատվության մեջ առկա վրիպակների դեպքում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները, համայնքային կազմակերպիչը 1 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան հայտարարությունը տեղադրելուց 2 օր հետո էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին, ինչով պայմանավորված վերջինս 1 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է համապատասխան գործողությունները:

25. Յուրաքանչյուր տեխնիկական անսարքության (ձախողման) դեպքում կազմվում է եզրակացություն անսարքության (ձախողման) պատճառների մասին և այն տեղադրվում է էլեկտրոնային մատյանում: Եզրակացությունը ներկայացվում է համակարգը սպասարկողի կողմից, ինչ որում, եթե տեխնիկական անսարքության (ձախողման) պատճառով

մասնակիցներից մեկը հաղթող է ճանաչվել, ապա կազմակերպիչն անսարքության (ձախողման) պատճառների մասին տեղեկանքի հիման վրա կազմում է հաղթող չճանաչելու մասին արձանագրություն, վճարված նախավճարը 3 աշխատանքային օրվա ընթացքում ապասառեցվում է, իսկ համապատասխան հաշվին փոխանցվածը՝ կազմակերպչի կողմից վերադարձվում է:

26. Տեխնիկական անսարքությունները վերացնելուց հետո էլեկտրոնային աճուրդը շարունակվում է սույն ուղեցույցով նախատեսված պայմաններով:

27. Էլեկտրոնային աճուրդի մասնակիցների համակարգում տեխնիկական անսարքության (ձախողման) դեպքերի համար կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում:

28. Յուրաքանչյուր չկայացած էլեկտրոնային աճուրդից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում կայքում զետեղվում է կրկնակի աճուրդի դրված լոտի մասին հրապարակային ծանուցումը և աճուրդն անցկացվում է համայնքային շարժական գույքի օտարման դեպքում՝ ծանուցման հրապարակմանը հաջորդող 15-րդ օրվանից, իսկ համայնքային անշարժ գույքի օտարման դեպքում՝ 45-րդ օրվանից ոչ շուտ: Եթե էլեկտրոնային աճուրդը չի կայանում, ապա լոտի մեկնարկային գինը սահմանվում է հետևյալ կերպ՝

1) համայնքային անշարժ գույքի օտարման դեպքում՝ երկրորդ էլեկտրոնային աճուրդի ժամանակ մեկնարկային գինը սահմանվում է գնահատված արժեքի 85 տոկոսի չափով, չվաճառվելու դեպքում՝ երրորդ և հերթական էլեկտրոնային աճուրդի ժամանակ մեկնարկային գինը սահմանվում է գնահատված արժեքի 70 տոկոսի չափով, իսկ համայնքային շարժական գույքի էլեկտրոնային աճուրդով վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ չվաճառվելու դեպքում հաջորդ և հերթական էլեկտրոնային աճուրդի կազմակերպման ժամանակ մեկնարկային գինն իջեցվում է մեկնարկային գնի 15 տոկոսի չափով:

29. Համայնքային գույքի օտարման դեպքում, եթե աճուրդը համարվում է չկայացած, հաղթող մասնակցի կողմից վճարումները սույն ուղեցույցով սահմանված ժամկետում չկատարվելու կամ աճուրդային արձանագրությունը չստորագրվելու, , ինչպես նաև մասնակցի կողմից ներկայացված տվյալներն ու փաստաթղթերը սխալ լինելու պատճառով, ապա այդ դեպքերում հաջորդ աճուրդը կազմակերպվում է առանց մեկնարկային գնի նվազման, իսկ նախավճարը սահմանվում է՝ սույն ուղեցույցի 9-րդ կետի 1-ին և 2-րդ

ենթակետերով սահմանված սանդղակներով հաշվարկված նախավճարի մեծությունը բազմապատկելով 1.1 գործակցով, որը կարող է կիրառվել մեկ անգամ:

30. Էլեկտրոնային աճուրդի կազմակերպիչը երաշխավորում է աճուրդի մասնակիցների անձնական տվյալների պաշտպանությունը: Աճուրդի մասնակիցների անձնական տվյալները չեն կարող տրվել երրորդ անձանց՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

31. Կազմակերպիչը պարտավոր է վարել փաստաթղթային գրառումներ և պահպանել էլեկտրոնային աճուրդի հետ կապված փաստաթղթերը (պայմանագրերը, արձանագրությունները և այլն) աճուրդի ավարտից երեք տարվա ընթացքում և արխիվացնել օրենքով սահմանված կարգով:

32. Կազմակերպիչը պատասխանատվություն է կրում լոտի այն թերությունների համար, որոնց մասին տեղյակ է եղել կամ պարտավոր էր տեղյակ լինել, սակայն չի զգուշացրել սակարկությունների մասնակիցներին: Կազմակերպիչը պատասխանատվություն է կրում իր տիրապետման տակ գտնվող լոտի վնասվածքների համար և կրում է լոտի պատահական կորստի ռիսկը, եթե սակարկությունների կազմակերպման մասին պայմանագրով այլ բան սահմանված չէ: Այլ մարմնի տիրապետման տակ գտնվող լոտի վնասվածքների և պատահական կորստի համար պատասխանատվություն է կրում տվյալ մարմինը:

33. Սույն ուղեցույցով նախատեսված արձանագրության օրինակելի ձևը ներկայացվում է ստորև.

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ 1

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Աճուրդի կազմակերպիչ համայնքի անվանումը, գտնվելու վայրը	
2. Գույքը հաշվառող մարմինը	
3. Աճուրդի կազմակերպման իրավական հիմքը	

4. Աճուրդի կազմակերպման ամսաթիվը, ժամը, վայրը	
5. Լոտի համարը	
6. Լոտի անվանումը և բնութագրող ցուցանիշները	
7. Լոտը երրորդ անձով ծանրաբեռնված լինելու վերաբերյալ տեղեկատվություն	
8. Լոտի մեկնարկային գինը	
9. Լոտի վերաբերյալ տեղեկատվություն	
10. Լոտի գնման գինը	
11. Նախավճարը	
12. Աճուրդի կայացման դեպքում հաղթողի տվյալները	

Հաղթող (հաղթողի ներկայացուցիչ)՝ Կազմակերպչ՝

(անունը, ազգանունը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը) (ստորագրությունը)

(օր, ամիս, տարեթիվ) (օր, ամիս, տարեթիվ)

ՕՐԻՆԱԿԵԼԻ Ձև 2

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

----------համայնքը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա ----------թ. ----------ին, ժամը՝ ----------ին https://www.e-auctions.am կայքի միջոցով:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության կառավարության ---------- որոշման համաձայն օտարման ենթակա ---------- ---------- անշարժ գույքը

Հ/Հ	Լոտի հերթական համարը	Անշարժ գույքի (լոտի) անվանումը	Հասցե	Շենք-շինությունների մակերեսը (քառ. մետր)	Հողամասի մակերեսը (հեկտար)	Անշարժ գույքի գնահատված արժեքը (ՀՀ դրամ)	Անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքում ներառված հատկացված հողամասի գնահատված շուկայական արժեքը (ՀՀ դրամ)	Հողամասի տվյալ պահին գործող շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)	Լոտի մեկնարկային գինը (ՀՀ դրամ)	Նախավճարը (ՀՀ դրամ)	Նվազագույն գնային հավելման չափը (ՀՀ դրամ)

** Աճուրդի կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը՝ ----------:*

** Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև պետությունը (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի),*

**** Աճուրդի մասնակցության համար էլեկտրոնային համակարգում (https://www.e-auctions.am/) գրանցվելուց և մուտք գործելուց հետո անհրաժեշտ է e-payments համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից առնվազն 5 րոպե առաջ վճարել նախավճար:***

**** էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 20-րդ և 21-րդ կետերով:****

**** Աճուրդի վերաբերյալ անհրաժեշտ և լրացուցիչ տեղեկատվություն ու տեխնիկական աջակցություն ստանալու համար Մասնակիցները կարող են զանգահարել ---------- և ---------- հեռախոսահամարներին կամ այցելել ----------:***

Աճուրդի մասնակցության հայտերի ներկայացնելը և պայմանները՝

-Աճուրդին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ սեփականության իրավունք,

-Էլեկտրոնային համակարգում մասնակիցների գրանցումն իրականացվում է առցանց եղանակով, գրանցումն իրականցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 16-րդ կետով սահմանված կարգով:

Աճուրդի անցկացման և աճուրդում հաղթողին որոշելու կարգը՝

- Էլեկտրոնային աճուրդի ավարտին նախորդող վերջին րոպեի ընթացքում յուրաքանչյուր նոր գնային առաջարկի դեպքում աճուրդը շարունակվում է ևս 1 րոպե՝ հաշված առաջարկի ստացման պահից: Աճուրդի ընթացքում յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնելու նոր գնային առաջարկ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային առաջարկը՝ առնվազն նվազագույն հավելման չափով: Ընդ որում, մեկից ավելի լոտերը կարող են սկսվել միաժամանակ, սակայն յուրաքանչյուր հաջորդ լոտ կարող է ավարտվել նախորդ լոտի ավարտից առնվազն 1 րոպե հետո:

- Էլեկտրոնային աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը: Հաղթողը որոշվում է համակարգի միջոցով: Կազմակերպիչն էլեկտրոնային աճուրդի կայացման օրը հաղթող մասնակցի վերաբերյալ կազմում է սույն կարգով սահմանված ձևին համապատասխան արձանագրություն և առցանց եղանակով ուղարկում է հաղթող մասնակցին այն ստորագրելու և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու համար:

- Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցն ստորագրված արձանագրությունն ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 22-րդ կետում նշված փաստաթղթերը, աճուրդի կայացման օրվանից մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, առցանց եղանակով փոխանցում է կազմակերպչին:

Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցը պարտավոր է արձանագրությունն ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել լոտի գինն ամբողջությամբ՝ հաշվանցելով նախավճարը՝ ———————————— հաշվեհամարին:

**** Աճուրդի Կազմակերպիչը նախավճարը, աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում, վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին՝ մասնակցության հայտում նշված հաշվետիրոջ հաշվեհամարին:***

**** Համակարգի տեխնիկական անսարքության (ձախողման) դեպքում էլեկտրոնային աճուրդների անցկացումը կարող է կասեցվել մինչև տեխնիկական անսարքությունների վերացումը, որոնց մասին աճուրդի կազմակերպիչը տեղեկացնում է տվյալ լոտի աճուրդի մասնակիցներին՝ էլեկտրոնային փոստի կամ հեռախոսային հաղորդագրության միջոցով: Յուրաքանչյուր տեխնիկական անսարքության դեպքում կազմվում է տեղեկանք անսարքության պատճառների մասին և այն տեղադրվում է էլեկտրոնային մատյանում: Տեղեկանքին կից ներկայացվում է համակարգն սպասարկող անձի եզրակացությունը: Տեխնիկական անսարքությունները վերացնելուց հետո էլեկտրոնային աճուրդը շարունակվում է սույն հրապարակային ծանուցմամբ նախատեսված պայմաններով:***

**** Համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշման և ———————————— որոշման՝***

- Աճուրդը կանցկացվի էլեկտրոնային (գնի ավելացման) եղանակով:

- Աճուրդում հաղթող ճանաչված անձն արձանագրությունը ստորագրելու օրվանից 3 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտի (լոտերի) գինը:

- Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցը պարտավոր է արձանագրությունն ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել Գույքի արժեքի որոշման համար նախատեսված գումարը փոխանցել «———————————— հաշվեհամարին՝ պարտադիր նշելով օտարվող գույքի հասցեի (նշելով գույքի հասցեն) որոշման արժեքի ծառայության համար:

- Աճուրդի հաղթողի կողմից առաջարկված գնի, ինչպես նաև գույքի արժեքի որոշման համար նախատեսված գումարի արժեքի (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) վճարումից հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գնորդի հետ կնքվի օտարման պայմանագիր՝ նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել պայմանագրի նոտարական վավերացման և գույքային իրավունքների պետական գրանցման համար օրենքով սահմանված գումարներն ու տուրքերը:

- Աճուրդի հաղթողի կողմից սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում մուծված նախավճարը չի վերադարձվում, աճուրդը համարվում է չկայացած և լոտ (եր)-ը վաճառելու նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ՝ նույն պայմաններով:

***Ծանուցում.**

«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված.

1. Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լոտի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լոտի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը:

Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:

2. Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կատարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:

3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

Քրեական օրենսգրքի 283 հոդված.

1. Հրապարակային սակարկությունների կամ գնումների անցկացման կարգը խախտելով կամ մեկ այլ անձի հետ անօրինական համաձայնության գալով հրապարակային սակարկության կամ գնումների հաղթող դառնալով, խաբեությամբ կամ ապօրինի այլ եղանակով գույքի սեփականատիրոջը, սակարկություններ, գնումներ կազմակերպողին, գնորդին, այլ տնտեսավարող սուբյեկտի, անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

2) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

***Ուշադրություն. աճուրդի ընթացքին կարող եք հետևել առցանց եղանակով https://www.e-auctions.am կայքում:**

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ 3

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

----------համայնքը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա ----------թ. ----------ին, ժամը՝ ----------ին https://www.e-auctions.am կայքի միջոցով:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության կառավարության ---------- որոշման համաձայն օտարման ենթակա ---------- ---------- շարժական գույքը

Լոտի հերթական համարը	Գույքի (լոտի) անվանումը / նույն. համար	Թող. տարեթիվը/ թափքի տեսակ	Գույքի գնահատված արժեքը (ՀՀ դրամ)	Լոտի մեկնարկային գին (ՀՀ դրամ)	Նախավճար (ՀՀ դրամ)	Նվազագույն գնային հավելման չափ	Գույքի (լոտի) տեխնիկական վիճակ	Գույքի (լոտի) գտնվելու վայր

Աճուրդով վաճառվող գույքի պահառության վայր այցելելու համար զանգահարել՝ ---------- հեռ., ***https://www.e-auctions.am*** կայքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար՝ ---------- հեռ.: Կազմակերպվող աճուրդների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար՝ ---------- --------- հեռ.:

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՒ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Էլեկտրոնային աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև պետությունը:

2. Էլեկտրոնային համակարգում մասնակիցների գրանցումն իրականացվում է առցանց եղանակով՝ նշելով՝

1) ֆիզիկական անձանց դեպքում՝ գրանցվողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, ծննդյան ամսաթիվը, հեռախոսահամարը, հասցեն, քաղաքացիությունը, հանրային ծառայությունների համարանիշը, էլ-փոստի հասցեն.

2) իրավաբանական անձանց դեպքում՝ կազմակերպության անվանումը, հասցեն ու հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև տնօրենի (եթե գրանցվողն այլ անձ է) անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, ծննդյան ամսաթիվը, հեռախոսահամարը, հասցեն, քաղաքացիությունը, հանրային ծառայությունների համարանիշը, էլ-փոստի հասցեն:

3. Համակարգում գրանցված անձը կարող է մասնակցել համայնքային գույքի օտարման (վաճառքի) նպատակով համակարգի միջոցով կազմակերպվող էլեկտրոնային աճուրդին Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թ. սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ հաստատված հավելվածով սահմանված ժամկետի մեկնարկից սկսած մինչև ավարտից առնվազն 5 րոպե առաջ՝ www.e-payments.am վճարային համակարգի միջոցով նախավճար վճարելու դեպքում:

4. Էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ սահմանվում է լոտի աճուրդի նվազագույնն սկսման պահին հաջորդող երրորդ աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Էլեկտրոնային աճուրդի ավարտին նախորդող վերջին րոպեի ընթացքում յուրաքանչյուր նոր գնային առաջարկի դեպքում աճուրդը շարունակվում է ևս 1 րոպե՝ հաշված առաջարկի ստացման պահից: Աճուրդի ընթացքում յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնելու նոր գնային առաջարկ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային առաջարկը՝ առնվազն նվազագույն հավելման չափով: Ընդ որում, մեկից ավելի լոտերը կարող են սկսվել միաժամանակ, սակայն յուրաքանչյուր հաջորդ լոտ կարող է ավարտվել նախորդ լոտի ավարտից առնվազն 1 րոպե հետո:

5. Յուրաքանչյուր լոտի էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի աճուրդի նվազագույնն սկսման պահին հաջորդող երրորդ աշխատանքային օրվա համապատասխան ժամը:

6. Էլեկտրոնային աճուրդի ավարտին նախորդող վերջին րոպեի ընթացքում յուրաքանչյուր նոր գնային առաջարկի դեպքում աճուրդը շարունակվում է ևս 1 րոպե՝ հաշված առաջարկի ստացման պահից: Աճուրդի ընթացքում յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնելու նոր գնային առաջարկ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային առաջարկը՝ առնվազն նվազագույն հավելման չափով: Ընդ որում, մեկից ավելի լոտերը կարող են սկսվել միաժամանակ, սակայն յուրաքանչյուր հաջորդ լոտ կարող է ավարտվել նախորդ լոտի ավարտից առնվազն 1 րոպե հետո:

7. Էլեկտրոնային աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը: Հաղթողը որոշվում է համակարգի միջոցով: Կազմակերպիչն էլեկտրոնային աճուրդի կայացման օրը հաղթող մասնակցի վերաբերյալ կազմում է սույն կարգով սահմանված ձևին համապատասխան արձանագրություն և առցանց եղանակով ուղարկում է հաղթող մասնակցին այն ստորագրելու և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու համար: Հաղթող մասնակիցն արձանագրության հետ կազմակերպչին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացին՝ անձը հաստատող փաստաթղթի, փախստական անձի դեպքում՝ նույնականացման քարտի կամ ճամփորդական փաստաթղթի, իսկ օտարերկրյա քաղաքացին՝ անձնագրի պատճենները և թարգմանությունը.

2) իրավաբանական անձանց համար՝ գրանցման և հիմնադիր փաստաթղթերի պատճենները, իսկ քաղաքացիների, իրավաբանական անձանց գործադիր մարմնի ղեկավարի և լիազորված անձանց համար՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

3) իրավաբանական անձանց համար նաև գրավոր հավաստում այն մասին, որ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ դիմողի (հայտատուի) կանոնադրությամբ տվյալ գույքը տվյալ ձևով գնելու համար պետական համապատասխան մարմինների համաձայնություն չի պահանջվում կամ, որ պահանջվող համաձայնություններն ստացված են (կցելով այդ համաձայնագրերը).

4) հաղթողի կողմից տրված լիազորագիրը (եթե արձանագրությունն ստորագրում է լիազորված անձը):

8. Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցն ստորագրված արձանագրությունն ու 7-րդ կետում նշված փաստաթղթերը, աճուրդի կայացման օրվանից մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, առցանց եղանակով փոխանցում է կազմակերպչին:

9. Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցը պարտավոր է արձանագրությունն ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել լոտի գինն ամբողջությամբ՝ հաշվանցելով նախավճարը՝ ----------հաշվեհամարին:

10. Էլեկտրոնային աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած մասնակցի նախավճարը երեք աշխատանքային օրվա ընթացքում ապասառեցվում է, իսկ համապատասխան հաշվին փոխանցվածը վերադարձվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում:

11. Աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն շահագրգիռ անձի հայցով՝ դատական կարգով:

12. Համակարգի տեխնիկական անսարքության (ձախողման) դեպքում էլեկտրոնային աճուրդների անցկացումը կարող է կասեցվել մինչև տեխնիկական անսարքությունների վերացումը, որոնց մասին աճուրդի կազմակերպիչը տեղեկացնում է տվյալ լոտի աճուրդի մասնակիցներին՝ էլեկտրոնային փոստի կամ հեռախոսային հաղորդագրության միջոցով: Յուրաքանչյուր տեխնիկական անսարքության դեպքում կազմվում է տեղեկանք անսարքության պատճառների մասին և այն տեղադրվում է էլեկտրոնային մատյանում: Տեղեկանքին կից ներկայացվում է համակարգն սպասարկող անձի եզրակացությունը, ընդ որում, եթե տեխնիկական անսարքության (ձախողման) պատճառով մասնակիցներից մեկը հաղթող է ճանաչվել, ապա կազմակերպիչն անսարքության պատճառների մասին տեղեկանքի հիման վրա կազմում է հաղթող չճանաչելու մասին արձանագրություն, վճարված նախավճարը 3 աշխատանքային օրվա ընթացքում ապասառեցվում է, իսկ համապատասխան հաշվին փոխանցվածը՝ կազմակերպչի կողմից վերադարձվում է:

13. Աճուրդի հաղթող մասնակիցը պարտավոր է արձանագրությունն ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Գույքի արժեքի որոշման համար նախատեսված գումարը փոխանցել ----------հաշվեհամարին:

14. Աճուրդում հաղթած մասնակիցը եթե չի ստորագրել արձանագրությունը կամ հրաժարվել է կատարել հետագա վճարումները կամ սահմանված ժամկետում 7-րդ կետում նշված շտկված փաստաթղթերը չի ներկայացվել, ապա աճուրդը համարվում է չկայացած, նախավճարը չի վերադարձվում և փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

**Ծանուցում.*

«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված.

Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լոտի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լոտի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը: Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կատարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը: Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

Քրեական օրենսգրքի 283 հոդված.

Հրապարակային սակարկությունների կամ գնումների անցկացման կարգը խախտելով կամ մեկ այլ անձի հետ անօրինական համաձայնության գալով հրապարակային սակարկության կամ գնումների հաղթող դառնալով, խաբեությամբ կամ ապօրինի այլ եղանակով գույքի սեփականատիրոջը, սակարկություններ, գնումներ կազմակերպողին, գնորդին, այլ տնտեսավարող սուբյեկտի, անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը՝ պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝ կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Աճուրդի կազմակերպիչ՝ ——————————————————:

Աճուրդի կազմակերպչի գտնվելու վայրը՝ ——————————————————: